

# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## Մատթեոս Մամուրեան (1830-1901)

Ծնած է Իզմիր եւ նախնական կրթութիւնը ստացած՝ տեղւոյն Մեսրոպեան դպրոցը, իսկ միջնակարգ ուսումները՝ Փարիզի Մուրատեան Վարժարանը 1846–1850: Հայրենիք վերադարձին կը նուիրուի կրթական եւ հրապակագրական ասպարէզին, աշխատակցելով “Մասիս” օրաթերթին: 1861–1868 կը կատարէ Պատրիարքարանին Դիւանապետի պաշտօնը, ապա կ’անցնի Իզմիր ստանձնելով Մեսրոպեան դպրոցին տեսչութիւնը՝ յաջորդելով Ստեփան Ոսկանի: 1871-ին կը հիմնէ *Արեւելեան Մամուլ*-ը, որուն հրատարակութիւնը կը դիրանայ երբ 1883-ին կը բանայ տպարան մը: 1899-ին տօնուեցաւ Մամուրեանի գրական յիսնամեայ յրբելեանը: Իր գրական ծածկանունները եղած են “Շահնուր” եւ “Վրոյր”:

Մամուրեան լուսաւոր միտք մըն է, զարգացած եւ հմուտ եւրոպական գրականութիւններուն, ժողովուրդներու յեղաշրջումներուն, եւ ճշգրիտ ծանօթութեամբ ազգային պատմութեան: Ամէն բանէ վեր ուղղամիտ է, տէր նուրբ ճաշակի եւ ունի գրական գեղեցկութեան գիտակցութիւնը:

Երեք կարեւոր գործեր թողած է որպէս վիպագիր. **Սեւ լեռին մարդը** (1871), **Հայկական նամականի** (1872), եւ **Անգլիական նամականի** (1881):

Լեզուն կը կրէ գրաբարեան ծանրութիւն մը, որ իր ժամանակինն է. հակառակ ասոր՝ կը զգացուի ճաշակ եւ մտահոգութիւն՝ գրական արտայայտութիւնները մշակելուն մէջ: Անժխտելիօրէն գրագէտ մըն է Մամուրեան: Ռեթէոս Պէրպէրեան հիացումով կ’արտայայտուի անոր մասին՝ ըսելով, “Գաղափարը բարձր էր իր գրուածոց մէջ, նախապաշարման ու խաւարի թշնամի, ուղղութեան եւ ճշմարտութեան բարեկամ, իրաւունքի եւ արդարութեան անձնուէր ջատագով”:

Մամուրեան լուրջ խորհող է իր **Նամականի**-ներուն մէջ, ուր իմաստասիրօրէն կը վերլուծէ մարդկային կեանքը: “Սեւ լեռին մարդը” վէպին մէջ կը յայտնուի որպէս ճարտար նկարագրող մը բնութեան, հոգեկան վիճակներու եւ մարդկային սրտին անձկութիւններուն, սէրերուն եւ տառապանքին:

Վալթեր Սքօթի “Իվանոէ”ն հայերէնի թարգմանողն ըլլալով, կը զգացուի անգլիացի գրագէտին ազդեցութիւնը իր վրայ: Նմանապէս, “Հայկական Նամականի”ն կը կրէ Մոնթեսկիոյի “Պարսկական նամակներ”ուն նկարագիրը, թէեւ գործողութեան վայրը Պոլիսն է, իր կեանքով, գրագէտներուն մտայնութեամբ, վէճերով, ազգային եւ կրօնական հրատապ հարցերով:

*(Քաղուած Հ. Մեսրոպ Վրոյ. Ծանաշեանի “Հայ Գրականութեան Նոր Շրջանի Համառօտ Պատմութիւն” հատորէն)*

